ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 5-ը մարտի 2018թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան /ԳԱՊ/,
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, ավագ լեյտենանտ Ս. Նիկոլյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը նշանակված էր 01.03.2018թ. ժամը 12:00-ին, սակայն քվորում չլինելու պատճառով պատվիրատուի ղեկավարի կողմից 2 օրով կասեցվել է և նշանակվել է 05.03.2018թ. ժամը 12:00-ին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին <Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ի և «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության <Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից: Բացի այդ ներկայացրած նմանատիպ պայմանագրի 1-ին էջը բացակայում է: Պայմանագրի կատարումն ընդունած կողմի տված տեղեկանքի մեջ պայմանագրի ծածկագիրը նշված է ՇՀՇՁԲ-7/16-1, այնինչ պետք է լիներ ՇՀԱՊՁԲ-7/16-1:

<Ավանգարդ> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացրած նմանատիպ պայմանագրի 1-ին էջը բացակայում է: Պայմանագրի կատարումն ընդունած կողմի տված տեղեկանքի մեջ պայմանագրի ծածկագիրը նշված է ՇՀՇՁԲ-7/16-1, այնինչ պետք է լիներ ՇՀԱՊՁԲ-7/16-1:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են շտկված անհամապատասխանությունները: 07.03.2018թ., ժամը 12:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց.

<Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից տրված տեղեկանքներ՝ 2015, 2016, 2017թթ. իրացման շրջանառության ծավալների մասին և ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի ընդամենը համախառն եկամուտ 8-րդ տողի՝ 2017թ. համախառն եկամուտի ծավալի մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց քննարկել և հիմք է ընդունել 2015, 2016, 2017թթ. իրացման շրջանառության ծավալների մասին տեղեկանքներով տրված տեղեկատվությունը, ըստ որի մասնակցի 3 տարիների իրացման շրջանառության ծավալների հանրագումարը կազմել է 622 834 038 ՀՀ դրամ, և քանի որ նշված գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալները գնահատել բավարար, հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցների առկայություն» որակավորման չափանիշին համապատասխանող:

Գնահատող հանձնաժողովը <Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ի ներկայացրած մյուս շտկված անհամապատասխանությունները, ինչպես նաև «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած շտկված անհամապատասխանությունները գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 07.03.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <Ֆորտունա Սփայսիզ> ՍՊԸ-ի և «Ավանգարդ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/16» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան

07.03.2018թ.